



Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2013թ. դեկտեմբերի 21, 22-ին տեղի կունենա

Գավառի պետական համալսարանի ամենամյա 16-րդ գիտական նստաշրջանը՝ նվիրված
Գավառի պետական համալսարանի հիմնադրման 20-ամյակին

1. Գիտաժողովն անցկացվելու է ըստ գիտության հետևյալ բնագավառների.

- ✓ *Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ*
- ✓ *Քիմիական գիտություններ*
- ✓ *Կենսաբանական գիտություններ*
- ✓ *Տեխնիկական գիտություններ*
- ✓ *Էկոլոգիական գիտություններ*
- ✓ *Գյուղատնտեսական գիտություններ*
- ✓ *Պատմական գիտություններ*
- ✓ *Տնտեսագիտություն*
- ✓ *Փիլիսոփայական գիտություններ*
- ✓ *Բանասիրական գիտություններ*
- ✓ *Իրավաբանական գիտություններ*
- ✓ *Մանկավարժական գիտություններ*
- ✓ *Հոգեբանական գիտություններ*
- ✓ *Սոցիոլոգիական և քաղաքական գիտություններ*
- ✓ *Աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնապահպանություն*

2. Հոդվածների շարվածքին ներկայացվող պահանջներն են՝

Գիտաժողովի նյութերի հրապարակման համար խնդրում ենք մինչև ա/թ դեկտեմբերի 1-ը Գավառի պետական համալսարան ներկայացնել գիտական հոդված՝ հինգ էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով երկու օրինակից, համակարգչային շարվածքով (A4 չափի տպագրական թղթի վրա, Arial Armenian, Times New Roman տառատեսակներով, 1,15 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 20 մմ լուսանցքով): Վերևում նշել վերնագիրը՝ 12 տառաչափով (մեծատառերով, **Bold**): Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում, նշել հեղինակ(ներ)ի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը (**Bold**), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել մեծատառով նոր տողից), բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը՝ վերջում նշելով նաև օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները: Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերը հավաքել Microsoft Equation Editor 3.0 ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները՝ 10 տառաչափով, ինչպես նաև հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, հեղինակ(ներ)ի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը: Չափորոշիչներին չհամապատասխանող զեկույցները չեն ընդունվելու: Զեկույցումները ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:

Կից անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ամբիոնի երաշխավորությունը, կարծիք արտաջարկվող հոդվածի մասին:

ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1,
Գավառի պետական համալսարան,
հեռ. 28-20-75, (0264) 2 5775
E- mail: info@gsu.am